

ԻՐԱԶԵԿԻ ՀԱՍՑԵԻՆ

Տեղական երկու թերթերու մէջ ալ գրածներնից կարգացի:

Կը ցաւիմ որ զեռ շատ պակասներ կան անոնց մէջ. քիչ էք գրած եւ եւ կը պատահի ա՛լ աւելիին: Միայն կը զարմանամ որ ինչո՞ւ արդեօք իբրբը սարբեր գոյնով ներկայացնելու ջանքը ըրած էք. ինչո՞ւ շատ բան փոխած, սեւին ձերմակ ըսած եւ կարգ մը պարագաներ ալ դիտմամբ մուցած էք, մանաւանդ գիտած էք որ շատ սիրուն սուտեր գլորած էք որոնցմէ, ի՞նչ մեղքս պահեմ, չսփազանց ախորժեցայ: Կը ներքէ՞ք որ խնդրեմ ձեռնէ, որպէս զի շարունակէք ձեր այդ ընթացքը եւ գրելու ձեռք լոկ հաճոյք մը պատճառելու համար մեզ որ այս վշտակիր վիճակնուս մէջ այդ կարգի ծիծաղելի եւ ճամբարապէս ըստփեցուցիչ միտքարանքի պէտքը ունէինք:

Նըջանկութեան ի՞նչ հեշտալի հեռապատկեր մը ունեցաք արդեօք այդ յօդուածը գրած աստեղնիկ. գուցէ ըսիք ինքնիշխանիք ա՛լ ջանջախեցի, փշրեցի Պարոնեան ընտանիքը, լաւ մընցա՛ւ, ամէնքը մէկ հոգիներն առաւ մնաց: Չեմ՝ կրնար խնդալս բունը կըր կը մտածեմ թէ զեռ միտքներ կան աշխարհի վրայ որոնք այս կարգի յղացումներ կործան մտքերուն մէջ եւ դափնիներու վրայ սաւառնել կերպով: Հաւատացէք որ եթէ եւ ըլլայ թաղ. խորհրդոյ անդամներն մին՝ ձեզ մէկ քանի չէ՞ օղի կը հրամարնէի, ճակատնիք կը համբուրէի, ձեռքերնիք կը սեղմէի եւ Մաքուս Աղայի չայիրին վրայ արժանի ճաշ մը կը սարքէի:

Կը կարծէիք որ Պարոնեան ընտանիքը ձեռնէ եւ ձեզի խորհուրդ տուողներէն կըստաւէր փառք, գովասանք եւ ալելուեա որ ձեր գրածներէն ալ ցաւ զգար: Արգարեւ արգահատելի էք եւ արժանի նկատուելու այն փայտի կտորը որուն ծայրէն բնած թաղ. խորհուրդը ջուր կը պղտորէ, որպէս զի այդ խառնուած ջուրին մէջ ձուկ որսայ եւ ազատի այն հարուածներէն որոնք այս միջոցին թափուեցան իր գլխուն:

Դուք ինքզինքնիք իրազեկ ցոյց կուտաք, բայց դժբաղդարար մուցած էք որ ձեռնէ աւելի իրազեկ կայ որ ձեզ պիտի սորվցնէ չպիտցածնիք, ճիշդ վարպետ առտուի մը տան մէջ անցած դարձածին նման, սա տարբերութեամբ որ զձեզ փոխանակ ծնգերուս վրայ առնելու — վասն զի մեծ էք արդէն — ատուրներուս վրայ պիտի առնեմ:

Կըսէք թէ՛ թաղ. խորհուրդը մինչեւ վերջին օրերս մեզի նկատմամբ բոլորովին տարբեր գաղափար մը ունի եղեր. ինչ էր արդեօք այդ գաղափարը, բռնէք անսնենք. մի՞ գուցէ ապիկարներ եւ աշխարհք բան չը հասկողներ կարծած է:

Փա՛ստ մըն է որ Ա. էֆ. Պարոնեանի մահազգոններուն մէջ մարմնոյն ազգ. գերեզմանատան մէջ ամփոփուելը նշանակելով՝ չմտածենք զայն եւ կեղեցեոյ բակին մէջ թաղել. կը կարծէք որ հաւատացողներ կըլլան ձեզ ցոյց տալով մեր որոշման կանխաւ լինելը, որ կրնար փոխուել եթէ համաձայնէինք թաղ. խորհրդոյ հետ եւ այս վերջինը անտեղի վարմունքներով մեզ չվերաւորէր:

Նմանօրինակ պարագաներու մէջ թաղ. խորհուրդի մը պարագը ի՞նչ պէտք է ըլլայ. անվայել խօսքեր, ճնշում, թէ Զօքթօրին թովմանանի յուղարկուողութեան ծախուց վճարման առթիւ բռնած անխմանալի ընթացքը չեղորացնելու միջոցներ ձեռք առնել: Որո՞ւ եղաւ վնասը, եթէ ոչ եկեղեցիին որ կորսնցուց ու է գուժար, մը պղտոր կամ մեծ, վասն զի հաւատալիք բան էր որ Աւետիս Պարոնեանի յուղարկուողութեանը 180 Փրանքով (եւ ոչ 120, ընկալագրներ ունինք) կատարուէր:

Եթէ թաղ. խորհուրդը հանգուցեալ Զօքթօրին թաղման ծախքին վճարման առթիւ ա՛յնքան տարօրինակութիւններ չընէր եւ Զօքթ. Փափազեանի վերաւորելու սպանակիան նամակ մը չգրէր, ինչո՞ւ արտակարգ թաղումը պիտի մերժուէր, ինչ որ ըրինք մի միայն թաղ. խորհուրդը զըլձացնելու նպատակաւ:

Բայց պիտի ըտուի որ եկեղեցին կամ վարժարանը ի՞նչ յանցանք ունի: Ես այնպէս կը հաւատամ որ եթէ եկեղեցին եւ վարժարանը մէկ մէկ մարդեր, կը հատկա՞ք, մէկ մէկ մարդեր ըլլային, հոգի ունենային՝ չպիտի ընէին ինչ որ ըրաւ թաղ. խորհուրդը, որոնցմէ մին ալ ձեզ այդ յօդուածը ներշնչելն է:

Կիտեմ որ եկեղեցին կամ վարժարանը չաղքատանար արտակարգի համար մեր տալիք չնշին գումարը չը վճարելէն, սակայն ինչո՞ւ վնասն անոնք, նոյն իսկ 10 փարան, որուն կարօտ են եւ ինչո՞ւ թաղ. խորհուրդը մը պատճառ ըլլայ ազգ. հաւատառութիւններու վնասին. ասոնք ա՛յնպիսի հարցեր են որոնց ո՛չ ձեր եւ ո՛չ ալ թաղ. խորհրդոյ վարել չգիտցող անդամներուն խելքը կը հասնի:

Եթե՛ թաղ. խորհուրդը չէ՛ կըր կըսէք թէ թաղականներն են եղեր մեզ առաջարկողը որ մեր ննջեցեալը եկեղեցեոյ բակին մէջ թաղուի: Ես հինգշաբթի օր կէսօրէն յետոյ միայն դասի թաղական խորհրդին որ սակայցոյցները աչքէ անցրեմ եւ յուղարկուողութեան ծախքը կանխիկ վճարեմ ըստ իր լրագրական աղբարարութիւններուն. ո՞վ ուրմն հինգշաբթի առաւօտուն իսկ այդ մասին խօսեցաւ մեր տան մէջ Տէր Արգարիսին որ խոստացաւ հաղորդել մեր խնդրանքը թաղականներուն եւ պայմանները հասկնալ ու մեզ պատահալիս մը ըսելու: Արգեօք թաղականները չե՞ն որ Տէր Արգարիսէն իմացան մեր մտադրութիւնը եւ յետոյ է որ

սակեցին զիս որոշումնիս գործադրել: Գոնէ՛ այս կէտը լաւ պիտցած ըլլայիք եւ հարցնէիք Տ. Սարգիսին, է՛յ եւրանելի:

Կարելի՞ բան էր որ մենք արտակարգի սակեցինք ընդունէինք եւ այսպէս անուղղակի կերպով անիրաւ հանէինք հանգուցեալ Զօքթօրին յուղարկուողութեան հաշուեցոյցի մասին եղած դիտողութիւնները որոնք իրաւացի են:

150 կամ 200 նարոյնով մեր ննջեցեալը եկեղեցեոյ բակին մէջ թաղելը աննպաստ պարագայ մ'էր մեզ համար, երբ Պոլսոյ մէջ այդ սուտերը թիւերը ձեռք բերելու համար առնուազն 500 տաճկական ոսկի հարկ է վճարել եւ ինչէ՞ն գիտէք որ չպիտի տրուէր այդ գրամը. գուժ մեր պրպանին մէջն էիք կամ մեր սրտէն անցածը Բէճիթնիօկեան ճառագայթով պիտեցիք:

Թո՛ղ թաղ. խորհուրդը Պարոնեանի հաշիւը վճարած միջոցիս թովմանանի հաշիւն ալ մէջ չխառնէր որ ես ալ չզայցարկայի, ու զիբար համոզելով ինչպէր եկեղեցիին նպատակաւ կերպիւ կարգադրուէր:

Սուտ է որ Պ. Սարգիս Գարբէլեան ի ներկայութեան թաղ. խորհրդոյ բոլոր անդամներուն, հանդիսաւորապէս արտասանեց առ բաները « քէրթէ պու քէրթէ անր » հանգուցեալ Զօքթօրին հաշուոյ խնդրին կարգադրութեանը համար, որուն վրայ ինձ հետ գանուող ճաշարանապետ Պ. Տիգրան Թիւֆէնիճեան գիտողութիւնները ըրաւ եւ ասոր Պ. Յ. Մ. Թովմանեան պատասխանեց « Ելիք, պղտուան էյի ֆըրասիթ օլաճաղ »: Ասոր վրայ չէ՛ր որ ես ալ սպանազայ պուլկարական եկեղեցին գիտել ուր կրնայինք ասանց կուրի եւ ասանց անվայել խօսքեր լսելու մեր յուղարկուողութիւնը կատարել:

Եթէ ասոնք սուտ են՝ ինչո՞ւ ուրեմն ձաղ. խորհուրդը ինձմէ խոստում պաւ որ իրենց խօսքերը տունը չը կրկնեմ եւ վերաւորանքի պատճառ չտրուի:

Ախա՛լ եմ թէ գերեզմանատունը օգուտ է. անկից աւելի օգուտուն տեղ ո՛ր կարելի է գտնել վառնայի՛ մէջ: « Ինձ համար ծովն ալ ձգուիմ՝ կարծուողութիւն չունի » ըսեր եմ եւ Պ. Գ. Կիւլպէսեան ջննդատուներ է զիս Աճէմի արձարանին մէջ. ինչո՞ւ, քանի որ եւրոպացիք ալ թաղուելուն կարծուողութիւն չեն տար եւ այսուի կը յանձնարարեն կամ չինացիք իրենց ննջեցեալները բարձր պարբնագներու վրայ լայց օղին կը գնեն որ ազատները ուտեն, հասցնեն: Ասոնք ալ գիտէ՛ք, ՚հ. « Իրազեկ », երբ զթիւրնուդ օտիլը անցածները անգամ չէք գիտէր:

Կրնէք թէ՛ թաղ. խորհուրդը գոն չէ՛ անոնք Ս. կարգի սակացոյցը ընդունելէն. ո՞վ հարցուց իր կամքը: Եւ կամ ի՞նչ նշանակութիւն ունի այն. ո՞վ կը մտածէ թաղ. խորհրդին հասնելը ըլլալու միջոցներուն

վրայ. որո՞ւ հոգ կեթէ գոն չեն մնացեր: Բարեկամ, մեր յուղարկուողութիւնէն մենք շատ գոն եղանք, ամենէն աւելի ա՛յս պէտք էր մեզ համար, մանաւանդ մեզ նման գաղթական բըլալը յանցանք համարուած գժբաղաներու համար:

Մուրատ էֆ. Սարգիսեան, Արամ էֆ. Ստամպուլուեան եւ Զօքթ. Յ. Ա. Փափազեան կրնան հերքել որ չեն միջամտած մեզ համոզելու համար որ մեր ննջեցեալը եկեղեցի թաղուի, անոնցմէ երկուքը յատկապէս մեր առնը գալով եւ մերը եկեղեցեոյ մէջ հանգուցելոյն որդւոյն համոզելիք խօսքեր ընելով, եւ հարցուցէք թէ ի՞նչ առարկութիւններ եղած են անոնց կեթէ ոչ գժգոնութիւն թաղ. խորհրդին պէ՛մ որ պատճառ եղաւ իր դատապարտելի խօսքերովը եւ վարմունքներովը մեր որոշումն մեզ կետ կեցնելու:

Կուղէ՞ք որ բռնեմ թէ Մ. էֆ. Սարգիսեան մեր տան մէջ հանգուցելոյն որդւոյն եւ մեր տունէն դուրս ալ Ա. էֆ. Ստամպուլուեանի յայտարարած է թէ՛ ինչ մեր ուղածին պէս ներողութեան պիտի պիտի տայ թէ մեզ եւ թէ Զօքթ. Փափազեանի՛ կեթէ եկեղեցի թաղելու որոշումնիս՝ գործադրենք եւ եթէ թաղ. խորհուրդը մերժէ, ինչքը կարող է ամենքը մէկ թաղ. խորհրդարանէն դուրս նետուի:

Տէր Սարգիսին՝ թաղ. խորհրդոյ պատուէրով աղջկանց կրթարանի ուսանողները եկեղեցիէն դուրս հանելու ուղեւ ինչո՞ւ սուտ ըլլայ իր Գ. Ճիլէրճեան մեր տան մէջ, ինչք, տուալին անգամ ըլլալով յուղարկուողութեան օրն իսկ եկելու թիւերը յայտնեց մեզ խորին ցաւով եւ նոյնը կըրկեց իր խորը անգամ ի ներկայութեան Տէր Մարտիրոս հօր եւ « յանուն Յիսուսի » բռնելով խաչ հանելէ յետոյ կարողաց իր ու Տէր Սարգիսին մէջ կատարուած նոյն օրուան խոսակցութիւնը զոր զրի առած էր հրատուրակութեան տալու համար եւ յետոյ երբ Զօքթ. Փափազեանի լայց նամակը ու մեր նման հրապարակ նամակը գաւ, Պ. Ճիլէրճեան վախճալով որ թշնամութիւն մը կրնան եւ զինքը անօթի կը ձգեն՝ մեր ու Զօքթ. Փափազեանի վրայ վաշխով աղաչեց որ խնդրը փակուի ու մենք ալ արգահատելով Պ. Ճիլէրճեանի վրայ մեր հաւանութեան իսկ հրապարակեց իր յայտարարութիւնը:

Կրնա՞ք հատատունը որ Մուրատ էֆ. Սարգիսեան հանգուցելոյն որդւոյն հետ ի ներկայութեան Զօքթ. Փափազեանի 3000 Փրանքով մեր ննջեցեալին եկեղեցեոյ բակին մէջ թաղուելու մասին խօսք չէ ըրած եւ յետոյ չէ գացած ջաղաջապետ Տիգրանեանի սկսելու ամար նախնական ձեւակերպութիւնները որմէ յետոյ եւ կեղեցեոյ բակին դրան վրայ ձգուած սու շղարչը վար առնուելու լուրը իմանալով արգար գայրոյթով մը ալ չգիտնալով այսքան արձամարանքի, բոլորովին կը փոխէր որոշումն իս որուն հետեւանօք Մուրատ էֆ.

կը յանդիմանէ թաղ. խորհրդին ան-
զամենքը եւ այն ատեն ասոնք ալ գը-
լուինին կախ տեղը գնել կուտան
այդ հրաշագործ թիւը:

Նաեւ այս մասին ինչո՞ւ թաղ.
խորհրդի երկու անդամները՝ առաջ-
նորդութեամբ Մուրատ էֆէնտի,
Տօքթ. Փափագեանի սուր կերթան,
անկից ա՛յնքան նախատական նա-
մակ մը ընդունելէն յետոյ եւ զինքը
հոն չգտնելով կը դիմին ասփրիչ
Պ. Միւրա՛ն Սեղբակեանի խանութը
ուր կածելուէր Տօքթ. Փափագեան
եւ հոն Պ. Գրիգոր Կիւլպէտեան
յուզեալ ձայնիւ կը յայտարարէ յիշ-
եալ Տօքթօրին թէ՛ ինքը այնքան
անկիրթ չէ որ գրան վրայի շղարչը
քաշէ հանէ եւ կը խնդրէ որ զայս
հաղորդէ Պարոնեան ընտանիքին:

Անպատուարեր պատուակներ եւ
կամ պարզապէս դրամ չտալու մի-
տում կը նշանակէ երբ անտեղի ա-
րարքներէ զուտելով սրտումնիս ետ
կանանք. ի՞նչ ընելու էինք, արդեօք
ամենուն փոխաբէն թաղ. խորհրդին
« ես քեզ մեղայ » ըսելու եւ այսպէս
անզգաներու կա՞րգը անցնելու էինք:

Մենէ ո՞վ միջնորդ դրած է թաղա-
կաններուն քով որ Տօքթ. Փափագե-
անի դէմ դատ չբանան. ո՞վ. դոնէ
մէկը ցոյց տուէք որ ըսեմ թէ սուս
չէք: Միթէ Տօքթ. Փափագեանը իր
գրածը, ըսածը չգիտցող մը կարծե-
ցիք թէ ա՛լ չբիմանալով անոր սլաք-
ներուն, ստութիւններ հրապարակ
նետելու ստիպելն ձեզ:

Այսքան պարզաներ եւ սուտեր
մէջ տեղ հանելու բաւ չէ՞ արդեօք հա-
մողիւու այդ թաղ. խորհուրդը որ
փրբու եկեղեցիին միաս բերողներ
կա՞մ պէտք է այդ պաշտօնէն հեռա-
նան եւ կամ միասը սուտեն. սուս-
ները որո՞նք են « միասը մենք պիտի
վճարենք եթէ . . . » ըսող, յո-
խորտացողները: Ինչո՞ւ եկեղեցին
գոնէ մեր այս հրապարակային բա-
ցատրութիւններէն չօգտուի եթէ այդ
մասին տրամադրելի դրամ մը կայ
գրականներու մէջ եւ մենք այն ատեն
որքան արդեօք պիտի ուրախանանք
որ յանցանքնին ճանչցող թաղական-
ներ կան եղեր:

Ինչո՞ւ կը գրէք թէ թաղ. խոր-
հուրդը յայտարարած ըլլայ ինձ որ
Ա. կարգի մէջ տեսնուած մանրամաս-
նութիւններէն դատ դուրսէն ըլլա-
լիքները չպիտի ընդունի եւ չէք բնե-
թէ սակացոյցին մէջ եկեղեցւոյ բա-
կին՝ գրան վրայ շղարչ գնելու կամ
չգնելու խօսքը չկայ:

Ի՞նչ եղաւ սեւ շղարչը վար առնել-
նին որ գրուեր է մեր մարդոց կող-
մանէ առանց իմ գիտութեան եւ մի-
այն յետոյ է որ ես իմանալով զայցի
բացատրութիւն ինքրելու իրենցմէ,
որոնք հաստատեցին ըրած նախա-
տինքնին եւ եթէ իրաւունք էր վար
առնելը, ինչո՞ւ կը կին կախել տուին
Մուրատ էֆէնտին յանդիմանութեանը
վրայ եւ կամ ի՞նչպէս կը ըլլայ որ
մենէ յետոյ ուրիշ 180 ֆրանք վճա-
րող յուզարկաւորութեան մը կը
գրուի իրենց ձեռք իսկ:

Ինձ համար որ ծովը ձգուելուն
մէջ անտեղութիւն մը չեմ տեսներ,
կը կարծէք որ կարեւորութիւն ունի
դրան շղարչը, թէ եւ անոր վար առ-
նուիլը նախատինք մըն էր եւ մտադ-
րուած նախատինք մը որուն ար-
գիւնքը տեսնուեցաւ:

Ինչո՞ւ եկեղեցւոյ գրան վրան ալ
չղարչ դրած ըլլալու դերը կուտաք
մեզ:

Ո՞վ չը գիտէր թէ մեր եկեղեցին
սուգ չընդունիր բացի ֆրիստոսի սու-
պէն. առի 12 տարեկան տղայ մըն ալ
պիտի գիտնար եւ չը պիտի մտածէր
եկեղեցիին դուռը սպաւորել, բայց
կերեւի որ դուք եւ ձեզ այդ բաները
գրիլ սուտղները ասկից ալ տեղեկու-
թիւն չունին եւ բոնի ինքզինքնիդ
ծիծաղելի կընէք:

Գձուձք մե՞նք ենք թէ անոնք որ
այս կարգի բաներ կը մտածեն եւ
գիտեն ուրիշին վրայ մուր քսելու
վարպետ միջնորդները: Ո՞վ է անքաղա-
քավասութիւն ընողը՝ մե՞նք թէ
դուք որ սուտէ գաս ուրիշ բան չը
գիտէք ըսել ու գրիլ:

Գպրաց դասուն համար 100 ֆրանք
վճարելը մերժած ենք. կըսէք, եւ
ուզողակի անոնց դիմած՝ սակարկու-
թեան մտնելու նպատակաւ: Ստու-
թիւն մը չէ՞ անք գրածնիդ երբ թաղ.
խորհուրդը ինձ յայտարարեց որ կամ
արտակարգը պէտք է ընդունինք եւ
կամ զպրաց դաս չկայ:

Ուրիշոց արտակարգի մէջ անցու-
ցին զպրաց դասը որ այդ սակացոյցը
հաստատուած պահուն գոյութիւն չու-
նէր եւ միայն անկից յետոյ է որ
կազմուած է: Ո՞վ իրաւունք տուաւ
անոնց ամէն բան ուզածուն պէս
կարիլ թափելու. դո՞ւք թէ ձեզ նման
իրազեկները:

Միայն այս մտածումով էր որ մենք
զպրաց դասն Պ. Կարպիս Պալմանը
հրաժեցինք հետք բանակցելու հա-
մար եւ ոչ սակարկելու, յայտնելով
իրեն որ եթէ 100 ֆրանք չա՛նիլ կու-
զէ զպրաց դասուն գանձը որ դատարկ
է եւ պարտքի ներքեւ կը գտնուի,
վեց հօգի բաւական է մեզի եկեղեց-
ւոյ արարողութեան համար:

Պ. Կարպիս Պալման ո՞չ միայն չի
մերժեց այլ հաւանելով գնաց որ
թաղ. խորհուրդը եւ իր ընկերները
գանէ եւ անոնց հետ խօսի եւ մեզի
ուր մը բերէ, որ եղաւ թաղ. խոր-
հուրդին արգելքը՝ սա սպառնալիքով
թէ իրենց շապիկ չպիտի արուէ: Եթէ
եկեղեցի իջնել ուզեն,՝ Տեսնենք այս
զուամարն ալ պիտի վճարեն ճեկրղլիկն
թաղական աղաները որոնք առատա-
ձեռն ցոյց կը տրուին . . . :

«Ազգային խեղճ եւ մանկուսոյն
դաստիարակութեան համար (ձեր շա-
րայրութեամբ) ապրանքի եւ գձուձ
հաշիւներով օսնձգութիւններ ընող-
ներ» ինչո՞ւ կը կոչէք մեզ երբ ձեր
թելաղբիչները ունիք թուշերուդ
տակը որոնք ազգին միաս հասուցին:
Ինչո՞ւ. չգիտեմ, մասնաւոր վար-
ժարաններու աշակերտները ազ-
գային չեն նկատուի եւ այնպէս մը
կը խօսի որ՝ որպէս թէ անոնք
թրքի, հրեայի զաւակներ ըլլային

որոնցմէ կարտներուն անուան՝ Պա-
րոնեան ընտանիքը իր նուէրը ըրաւ:
Ի՞նչ, շիղերնուդ դպաւ որ Հայկա-
կան կրթարանին եւ Ազգական վար-
ժարանին դրամ տրուած է եւ ինչո՞ւ
ասոր համար բերաններէ փրփուրներ
գուրս կուզան եւ փորիցաւ կը յայտ-
նուի:

Բացարձակ եւ զգուշիլ ստութիւն
մը չէ՞ ըսելը թէ «Ա. էֆ. Պարոնեան»
առաջ մէկ եւ յետոյ զգաստացոյցիչ
խօսքերու վրայ հազիւ կարելի եզեր
է իր ժլատ ձեռքիչն 2 նարոյնոն
բրցնել, ինչպատ սեղոյս վարժա-
րանի շինութեան. ինչո՞ւ չեմ կըր-
նար աչքերնիդ մացնել ձեռքերնիս
գտնուած ընկալալիքը. որ բարեբաղ-
դաբար կորսուած չէ, եւ որուն վրայ
գրուած է սպալս:

ԸՆԿԱԼԱԿԻՐ

Ընկալայ Տ. Ա. Պարոնեանէ 60 լէվ
ուկի փոխարժէք նուիրատու թեան
ինչպատ Ազգ. նորակառոյց շէնքին:

Գանձակեա
Թաղ Խորհրդոյ
Մ. Սոսիսեան
(Կ.Ի.Վ)

Վստնա, 17 Սեպտ. 1897

Իրազեկը եթէ այդ միջոցի լրա-
գրներուն մէջ հրատարակուած նուիր-
ատներուն ցանկը կարգացած չէ,
ինչո՞ւ գոնէ զինքը թելաղբողները
ձանձրութիւն յանձն չլին փոսած
ստմարները թղթատելու եւ ձեզի
ճիշդը գրիլ տալու որ ձեզ գոնէ այս
պարագային մէջ ամօթով չհանէին:

Բարձեալ ո՞ւրանդէն տեղեցիք
սա հրաշալի սուտերնիդ որպէս
թէ այցելու հովիւ. Բարթողիմէոս
վարդապետը մեր սուրը եկիր է ուղ-
եայներու համար դրամ ուզելու եւ
մենք սեւ սուրճով մը միայն ճամբեր
ենք:

Բարթողիմէոս վարդապետ, փոռք
երկնաւորին վախճանած չէ. մօտեր-
նիս կը գտնուի, Բուսչուք է, հոն-
կից կրնայ հրապարակաւ յայտարա-
րել թէ մեր սուրը եկած է դրամ
ուզելու համար, եւ թէ մենք անուշ,
ըմպելի չի հանելով սեւ սուրճով մը
միայն ճամբեր ենք:

Բարթողիմէոս վարդապետին յայ-
տարարութիւնը ինձմէ աւելի ձեզի
պէտք է սուտերնիդ հաստատելու հա-
մար. տեսնեմ պիտի հրաւրէ՞ք զուք
ալ զինքը որ ճշմարտութիւնը ըսէ:
Վստահ եմ թէ Բարթողիմէոս վար-
դապետը պիտի յանդիմանէ ձեզ որ
սուտի մը քով կը գնէք իր անունը
եւ պիտի յայտարարէ որ մեր սուր
երկու անգամ ոտք կոխած է, մին՝
Տօքթիւր Թովմասեանի յիշատակին
պատարագ մատուցած օրը եւ միւսն
ալ Ա. էֆ. Պարոնեանի յուզարկաւ
որութեան առթիւ, երկուքն ալ միւր-
թարութեան համար եւ երկու պարա-
զային մէջ ալ սեւ սուրճ կը տրուէր,
բարեկամ, եւ ոչ կարմիր:

Եթէ Բարթողիմէոս վարդապետն
զատ ուրիշ ու եւ մէկը մեր սուրը
եկած է եւ հանգուցեալ Ա. Կարպիս
էֆէն-

ալի երեսը չենք կրցած ցոյց տալ,
պատճառը այն չէ՞ որ հիւանդու-
թիւնը ծանր ըլլալուն կարելի չէր
զինքը նեղել. ինչպէս որ ծանր եւ
վերջի օրերուն մէջ ըլլալը ապացուց-
ուեցաւ մահուամբ որուն ճշգու-
թիւնը եթէ խեղութիւնն ուղեք՝
պատարաս եմ մահուան վկայալիքը
ձեզ ներկայացնել որ համոզուիք:

Իսկ հանգուցեալ Տօքթօրի ախտոր
65 ամեայ մայրը. չոր ատիտակամա՞ծի
վրայ մնացած ըլլալուն զուրով. կը
հրաւիրեմ ձեզ որ վշտալից մայրը
սփոփելու համար գոնէ լրեն այցե-
լու թիւն մը տաք եւ տեսնէք թէ
մնացած տեղը արդարեւ չ'որ
թէ թաց է թէ անհարկել կուզուի թէ
կառավարութիւնը հանգուցեալ Տօք-
թօրին ամբողջ զոյքերը գաւկին
յատկացոյց որ անչափահաս է եւ ո-
րուն վերին պաշտպանն ալ ինքն է եւ
ասոր համար ամէն ինչ գրեց ու հի-
մակ ալ պիտի ծախուի, ասոր յան-
ցանքը որո՞նք է թէ ոչ օրէնքին որ
երկրինն է եւ այդ օրէնքին արամա-
գրու թիւնները քննադատող . . . :

Պ. Իրազեկ, ձեր նպատակը Պա-
րոնեան ընտանիքը վարկարկի ընել
չէ, կըսէք. շնորհակալ եմ ձեր այդ
աղնիւ գրացումին (°) համար որուն
ապագայը գրածնիդ է եւ զիտեղք որ
գոնէ ստի սուտ չէք հեռաւորոր
կը խնդրեմ որ շարունակէք ձեր այդ
զուրկի ընթացքը ոչ ուն ոչ միայն
կարեւորութիւն չենք սուր, հապա
նոյնիսկ փոխթելու անգամ չէ. մի-
այն սուտերէ զգուշացէք զի անոնք
կրնան ձեր զլխուն փորձած մը բե-
րել. նաեւ ջանացէք որ ուրիշ ասեւ
երկու լրագրողներուն մէջ ալ գրածներ-
վար իրարմէ տարբերութիւն չունենան,
վաղու զի մենք այդ կարգի բաներէ
չենք սխալ թիր, բնորոշակապէս կու-
զենք որ ամէնքն ալ մէկ ըլլան եւ
մէջը պակաս չը գտնուի, ինչպէս իմ
գրածներուս մէջ պակաս չկայ:

Պէտք է որ զիտեղքնիդ լսածնիդ
եւ ձեզի ամբողջ զրիլ ստիպենին
խնամով իրարու բերէք համեղ,
զուարճալի եւ ախորժարեր բնիլու
համար ձեր գրածները, որպէս զի մեր
հրճուանքն ալ անպակաս ըլլայ:

Մնամ խորին յարգանք

ԻԳՆԱՏ ՊԱՐՈՆԵԱՆ

Վստնա, 2 Ապրիլ 1900

Отговорникъ Д-ръ Т. Хр. Стомановъ

Печатница «Взлнност», Варна.